



**«ՀԵՏԱՔՆՆՈՂ ԼՐԱԳՐՈՂՆԵՐ» հասարակական կազմակերպություն**

Երևան, Փ. Բուզանդի 1/3, 8-րդ հարկ, հեռ: (37410) 580219, 563363, (37494) 40 46 24, ֆաքս: (37410) 581102, E-mail: [info@hetq.am](mailto:info@hetq.am), [hetq@hetq.am](mailto:hetq@hetq.am), URL : [www.hetq.am](http://www.hetq.am)

26.01.2017թ.

ՀՀ Արմավիրի մարզպետ  
Պարոն **Աշոտ Ղահրամանյանին**

«Հետաքննող լրագրողներ» ՀԿ-ի  
«Հետք» թերթի լրագրող  
**Գրիշա Բալասանյանից**  
Հեռ. 093-82-26-80

Հարգելի պարոն Ղահրամանյան,

«Հետք» էլեկտրոնային թերթը դեռևս 2016թ. նոյեմբերի 19-ին նյութ էր հրապարակել այն մասին, որ Մեծամոր քաղաքի ավազանին օգոստոսի 9-ի թիվ 5 նիստի համար 21-Ա և 22-Ա որոշումներով զիջել է համայնքի թվով 5 բնակիչների շենք-շինությունների, հողի հարկի և ավտոմեքենաների գույքահարկի պարտքերը: Ընդ որում՝ նշված 5 քաղաքացիներից 4-ը եղել են ավազանու անդամներ կամ նրանց ազգականները: Մասնավորապես՝ զիջվել է Սլավիկ Ղումաշյանի շենք-շինությունների գծով ունեցած 356,400 դրամ պարտքը: Սլավիկը Ղումաշյանը ավազանու անդամ Սուրեն Ղումաշյանի եղբայրն է և ՏԻՄ մասին օրենքով համարվում է մերձավոր բարեկամ: Ջիջվել է նաև ավազանու անդամներ Արարատ Մարտիրոսյանի կուտակած 455,700 դրամ ավտոմեքենայի գույքահարկը, Գնել Գաբոյանի 195 400 դրամ շենք-շինությունների, Արմեն Արտենյանի 20,350 դրամ հողի հարկի պարտքերը: Նշված ավազանու անդամները մասնակցել են նիստին և քվեարկել իրենց և մերձավորի պարտքը զիջելու օգտին:

Ավազանու անդամները զիջել են նաև աղբի և բնակարանների սպասարկման իրենց ունեցած պարտքերը: Օրինակ՝ նույն օրվա որոշմամբ զիջվել է ավազանու անդամ Գևորգ Հովհաննիսյանի 8200 դրամ աղբի և 35,600 դրամի չափով բնակարանային սպասարկման վարձավճարները: Ինչպես նաև զիջվել են ավազանու անդամ Մասիս Ղուլիջանյանի եղբոր՝ Արարատ Ղուլիջանյանի ունեցած 14,500 դրամ աղբի և 49,500 դրամ բնակարանի սպասարկման վարձավճարները: Վերջիններս նույնպես մասնակցել են քվեարկությանը և կողմ քվեարկել իրենց և մերձավորի օգտին կայացված որոշմանը:

Հարգելի պարոն մարզպետ, նկատի ունենալով, որ օրենքի խախտումով զիջվել են խոշոր գումարներ և նկատի ունենալով այն հանգամանքը, որ «Հետքի» նույնանման այլ հրապարակումներից հետո դիմել եք համայնքներին որոշումները չեղարկելու և գումարները

ՀՀ Արմավիրի մարզպետի օրհանգրվան  
Ստորագրվել է  
27.01.2017թ.  
094/1098-11

համայնքային բյուջե վերադարձնելու պահանջով, հիմք ընդունելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6, 9, 12-րդ հոդվածների պահանջները, խնդրում եմ տրամադրել տեղեկություններ հետևյալի մասին.

1. Արմավիրի մարզպետարանն ի՞նչ քայլեր է ձեռնարկել «Հետքի» վերը նշված հրապարակումից հետո:
2. Արդյոք Մեծամորի ավագանու անդամներին և նրանց մերձավորներին տրված արտոնությունները չեղարկվել են և գումարները վերադարձվել համայնքային բյուջե:

Կից ներկայացնում եմ «Հետքի» հրապարակման լինկը՝ <http://hetq.am/arm/news/72879/metsamorun-harkery-dzhvarutyamb-en-havaqum-bayc-avaganu-andamnern-artonutyunner-en-talis-irenc-u-merdzavornerin.html>

\* Հարցման պատասխանը կարող եք ուղարկել էլեկտրոնային փոստով

Կանխավ շնորհակալություն

Դիմող՝ Գրիշա Բալասանյան

